ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԴԵՆԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenismer@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 72-Ա

ՎԱՐԴԵՆԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ, ՎԱՐԴԵՆԻՍԻ ԿՈՄԻՏԱՍ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՆԿԱԿԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑՈՒՄ ԵՎ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐՈՒՄ ԾՆՈՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԵՎ ԾՆՈՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի <<ը>> կետով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով <<Վարդենիս քաղաքի թիվ 1 մանկական երաժշտական դպրոց>>, <<Վարդենիս քաղաքի թիվ 2 մանկական երաժշտական դպրոց>> <<Վարդենիս քաղաքի Կոմիտաս Կարապետյանի անվան մանկական գեղարվեստի դպրոց>>, <<Վարդենիս քաղաքի թիվ 1 մանկապարտեզ>>, <<Վարդենիս քաղաքի թիվ 2 մանկապարտեզ>> և <<Վարդենիս քաղաքի թիվ 3 մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ների կանոնադրության 5-րդ և 6-րդ կետերի դրույթները՝ համայնքի ավագանին որոշում է.

1. <<Վարդենիս քաղաքի թիվ 1 մանկական երաժշտական դպրոց>>, <<Վարդենիս քաղաքի թիվ 2 մանկական երաժշտական դպրոց>> ՀՈԱԿ-ներ հաճախող երեխաների ծնողական վճարները սահմանել տարեկան 27000 ՀՀ դրամ:

2. <<Վարդենիս քաղաքի թիվ 1 մանկապարտեզ>>, <<Վարդենիս քաղաքի թիվ 2 մանկապարտեզ>> և <<Վարդենիս քաղաքի թիվ 3 մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ներ հաճախող երեխաների ծնողական վճարները սահմանել ամսեկան 3000 ՀՀ դրամ կամ համարժեք սնունդ:

3. <<Վարդենիս քաղաքի Կոմիտաս Կարապետյանի անվան մանկական գեղարվեստի դպրոց>> ՀՈԱԿ հաճախող երեխաների ծնողական վճարները սահմանել տարեկան 13500ՀՀ դրամ:

3.Սահմանել ծնողական վճարների հետևյալ արտոնությունները՝

1) Միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ երեխաներին:

2) Մեկ ընտանիքից նույն կազմակերպություն հաճախող 3-րդ երեխայից սկսած:

3) Նույն կազմակերպությունում դասավանդող ուսուցիչների երեխաներին:

4) Մանկուց հաշմանդամ երեխաներին:

5) Արցախյան ազատամարտի 1-ին և 2-րդ կարգի հաշմանդամների երեխաներին:

4 Ուժը կորցրած ճանաչել Վարդենիսի քաղաքային համայնքի ավագանու 11 դեկտեմբերի 2014 թվականի <<ՎԱՐԴԵՆԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ, ՎԱՐԴԵՆԻՍԻ ԿՈՄԻՏԱՍ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՆԿԱԿԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑՈՒՄ ԵՎ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐՈՒՄ ԾՆՈՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԵՎ ԾՆՈՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ>> N94-Ա որոշումը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հունվարի 1-ից:

Կողմ -8 Դեմ -0 Չեռնպահ -0

1. ԲԱՐՍԵՂՅԱՆ ՎԱՐԴԱՆ
2. ԵՐԱՆՈՍՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
3. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿԱՐԵՆ
4. ԽԼՈՅԱՆ ԳԵՂԱՄ
5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐՏԱԿ
6. ՇՀՈՅԱՆ ԶԱՎԵՆ
7. ՍԱՀԱԿՅԱՆ ՀԱՅԿ
8. ՍԱՖԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

Կ. Տ. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎՈՒՐԴՅԱ ԽԼՈՅԱՆ